

|                                                                                                                                                                                                              |                                                                                                                                                                                                  |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>245 Զհաւատոյ բանըս զայս դուք միշտ յիշեցէք,<br/>         Զձեր հոգիդ ու զմարմինըդ սուրբ պահեցէք,<br/>         Զանցաւոր կեանքըս զայս, բնաւ մի՛ սիրէք,<br/>         Յնստուծոյ օրինացն բնաւ զձեզ մի զատէք:</p> | <p>Remember always these words of faith,<br/>         Keep your souls and bodies pure,<br/>         Love not at all this transient life,<br/>         Lay not aside the laws of God.</p>         |
| <p>Ճշմարիտ հաւատով զնստուած սիրեցէք.<br/>         250 Զբարերար պարգեւացըն միշտ գոհացէք,<br/>         Զհայր եւ զորդին եւ զսուրբ հոգին գովեցէք,<br/>         Օրհնութեամբ, գոհութեամբ բարեբանեցէք:</p>          | <p>Love God with true faith,<br/>         Praise the Beneficent of gifts always.<br/>         Praise Father and Son and Holy Spirit!<br/>         With blessing, and laudation, give praise!</p> |

MICHAEL E. STONE

*Professor Emeritus of Armenian Studies and  
 Comparative Religion at the Hebrew Univer-  
 sity of Jerusalem*

### ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Մի՛ ստանար նախատինս յարանց չարաց, եւ մի՛ նախանձիր ընդ ճանապարհս  
 նոցա:

Ոչ օգնեսցեն զանձք անօրինաց, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:

Բրդեա՛ քաղցելոց զհաց քո, եւ զաղքատն անյարկս տար ի տուն քո:

Ի հաւատոյ եւ յուսմանէ տգէտք երեւին, եւ ի գործս՝ ծոյլք:

Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն:

Ոչ է բարւոք առնուլ զհաց ի մանկանց եւ արկանել շանց:

Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց:

Զգո՛յ՛ լերուք յամենայն անիրաւութեանց:

Իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի:

Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան նորա: